ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/83

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
«Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչներ՝ Ա.Պարանյանի, Հ. Ենգոյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26/9727-2019 գրությամբ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 07.06.2019թ. թիվ 01/61-10651 գրության հիման վրա, 11.06.2019թ. «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 07.06.2019թ. թիվ 01/61-10651 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/40», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42» ծածկագրերով գնման ընթացակարգերին մասնակցության հայտեր են ներկայացրել Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ն և «Գագնախշին» ՍՊ ընկերությունը (այսուհետև՝ Մասնակիցներ):

Գնման ընթացակարգերի շրջանակներում Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Մասնակիցների կողմից վերը նշված գնման ընթացակարգերի շրջանակներում ներկայացված հայտերում բացակայել է հրավերով պահանջվող «Արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և շինությունների նախագծում ճարտարագետ-կոնստրուկտոր (արտոնագիր)»-ը, ինչպես նաև՝ «Գագնախշին» ՍՊ ընկերության կողմից «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում բացակայել է հրավերով պահանջվող Հավելված 2.1-ը:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ Կարգ/ 41-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջով՝ մերժել է Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջիններիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկում եմ Մասնակիցների նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/40», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41» և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42» ծածկագրերով գնման ընթացակարգերի մասնակից «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 12.06.2019թ.-ին գրությամբ դիմել է «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26/9727-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, հայտնել է հետևյալը.

«*Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/40», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42» ծածկագրերով ԳՀ ընթացակարգեր (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):*

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև Լարիսա Նալբանդյան Ա/Ձ–ն և ճանաչվել առաջին տեղ զբաղենող մասնակից:

Սակայն՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/40» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի շտկվել իր կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը և Ա/Ձ-ի հայտը մերժվել է:

Այնուհետև նույն հիմքով Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվել են նաև «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41» և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42» ծածկագրերով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կողմից, համապատասխանաբար՝ 24.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 և 21.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրություններ համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում:

Հայտնում ենք, որ Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 18.01.2019թ. կայացրած թիվ ՍՑ-ԷՍ-2018/205 որոշմամբ /տես՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ համար 248/:

Վերոնշված թիվ ՍՑ-ԷՍ-2018/205 որոշման մասին Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ն ընդհանրապես տեղյակ չի եղել՝ քանի որ նույնիսկ երբևէ չի ծանուցվել այդ ընթացակարգի նիստերի ներկայանալու մասին, իսկ ՍՑ-ԷՍ-2018/205 ընթացակարգը նախաձեռնվել է դրոշմանիշային վճարի գծով պարտավություն ունենալու մասով և եթե ծանուցվեր, ապա այդ ընթացակարգի վերաբերյալ նշանակված նիստերի մասին և հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց դիրքորոշումները վերոնշված խնդրի վերաբերյալ՝ կներկայացվեր համապատասխան ապացույցներ և Ա/Ձ-ն չէր ներառվի այդ ցուցակում:

Այնուամենայնիվ, Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ն 2019թ. մասնակցել է բազմաթիվ ընթացակարգերի և որևէ ընթացակարգի մասով չի տեղեկացել, որ մեր Ա/Ձ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և միայն Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/40», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում է հայտնի դարձել, որ Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ն ներառված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով, այն է 18.01.2019 թվականից մինչև 18.01.2021թ. ներառյալ:

Ընդ որում, վերոհիշյալ փաստը հենց հայտնի է դարձել Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ին փաստաթղթերում շտկում կատարելու պահանջ ներկայացնելու փուլում, երբ մեկ այլ ընթացակարգին մասնակցելու ընթացքում պարզվել է, որ Ա/Ձ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և համապատասխանաբար առկա է հայտը մերժելու հիմք:

Ստացվում է մի իրավիճակ, որ Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ն ներառված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, սակայն Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/40», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42» ծածկագրերով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կողմից Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ի հայտը գնահատվել է բավարար: Մինչդեռ, Երևանի քաղաքապետարանը մասնակցի հայտը բավարար գնահատելիս՝ առաջին հերթին պարտավոր էր ծանոթանալ www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակի հետ և պարզելով միայն, որ մասնակիցը ընդգրկված չէ այդ ցուցակում և ունի հայտ ներկայացնելու իրավունք՝ նոր գնահատեր ներկայացված հայտը բավարար:

Մինչդեռ գնահատող հանձնաժողովների կողմից, ի սկզբանե, Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ի հայտը մերժելու դեպքում այլևս չէր առաջանա սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չշտկվելու հիմքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում նոր ընթացակարգ նախաձեռնելու հիմք:

Նման պայմաններում գտնում ենք, որ իրավաչափ չէ տվյալ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ի վերաբերյալ կայացրած բոլոր որոշումները, այդ թվում նաև շտկում կատարելու պահանջ ներկայացնելու վերաբերյալ որոշումը, քանի որ Լարիսա Նալբանդյան Ա/Ձ-ն զրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից և հենց այս հիմքում վերջինիս հայտը ի սկզբանե ենթակա էր մերժման:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից իր կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/40», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41» և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգեր (այսուհետ՝ նաև Ընթացակարգեր):

Ընթացակարգերին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներակայացրել նաև «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ն:

«Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 2 հավելվածներով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին ներկայացրած հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/40», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41» և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42» ծածկագրերով գնանշման հարցման հրավերներով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/40» ծածկագրով ընթացակարգի.

Գնահատող հանձնաժողովի 21.05.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող «Օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր» ներդիրը և «Արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և շինությունների նախագծում Ճարտարագետ-կոնստրուկտոր (արտոնագիր)-ը»:

Նույն արձանագրության համաձայն, գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովի 24.05.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը օրենքով սահմանված ժամկետում չի շտկվել:

Նույն արձանագրության համաձայն՝ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41» ծածկագրով ընթացակարգի.

Գնահատող հանձնաժողովի 22.05.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող «Արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և շինությունների նախագծում Ճարտարագետ-կոնստրուկտոր (արտոնագիր)-ը»:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովի 24.05.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը և 42-րդ կետը, «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի հայտը մերժել է:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42» ծածկագրով ընթացակարգի.

Գնահատող հանձնաժողովի 16.05.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող «Արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և շինությունների նախագծում Ճարտարագետ-կոնստրուկտոր (արտոնագիր)-ը»:

Նույն արձանագրության համաձայն, գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովի 21.05.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել իր կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետը, «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26/9727-2019 գրությամբ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի.

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/40», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41» և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42» ծածկագրերով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող «Արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և շինությունների նախագծում Ճարտարագետ-կոնստրուկտոր (արտոնագիր)-ը», իսկ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/40» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտում բացակայել է նաև «Օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր» ենթաբաժինը:

Գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստերը և ծանուցել մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Սակայն «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված՝ հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետը, «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման

դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Մասնակցի այն պնդմանը, որ արձանագրված անհամապատասխանությունների չշտկման պատճառն եղել է վերջինիս թիվ ՍՑ-ԷՍ-2018/205 ծածկագրով ընթացակարգի քննության արդյունքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու հանգամանքի մասին այդ պահին տեղեկանալու փաստը, չի կարող գնահատվել որպես հիմնավոր ու օբյեկտիվ պատճառաբանություն, քանի որ ընթացակարգի բոլոր նիստերի, ինչպես նաև 18.01.2019թ. կայացված որոշման վերաբերյալ տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հրապարակվել է www.gnumner.am պաշտոնական կայքում: Բացի այդ նույն կայքի «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» դաշտի 248 տողում նշված է, որ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ն ընդգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 18.01.2019թ.-ից մինչև 18.01.2021թ.-ը:

Հատկապես երբ՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու հանգամանքի մասին տեղեկանալու հանգամանքն որևէ պատճառահետևանքային կապ չունի արձանագրված անհապատասխանությունները չշտկելու փաստի հետ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ն, Պատվիրատուի կողմից

սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով արձանագրված անհամապատասխանությունների չտկումը, դրանով իսկ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26/9727-2019 գրությամբ «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Լարիսա Նալբանդյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**